Ֆ ֆ

ֆ ու տ բ ո լ ի ս տ

ֆուտբոլ ֆուտբոլիստ	տուֆ տորֆ	կարտոֆիլ ասֆալտ	Նունուֆար Ռաֆֆի Ֆրիկ

ՏՈՒՖԸ

Հայաստանը հարուստ է տեսակ-տեսակ քարերով: Դրանցից մեկն էլ տուֆն է: Տուֆը ոչ ծանր, փափուկ, բայց շատ դիմացկուն քար է: Տուֆից գեղեցիկ շենքեր են կառուցում, քանդակում են արձաններ ու խաչքարեր:

Մեր պապերը տուֆից վանքեր ու կամուրջներ են կառուցել:

Դարդ անողին դարդ չի պակասի, քեֆ անողին քեֆ չի պակասի:

Ի՞նչն է, ի՞նչը. տան մեջտեղում է այգու՝ սկզբում:

Ծառը խշշում է,
Գետը վշշում է,
Ջուրը թշշում է,
Օձը ֆշշում է:

/Տ ֆ /Տ ֆ Ֆշշալ, ֆիդայի

Ֆրիկն ու Ռաֆֆին հայ գրողներ են: